ԱՅԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԳԻՐԸ ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԺՈՒՍՏԻՆԻԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՔՍԱՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՔՐԻՍՏՈՍԱՎԱՆԴ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈ ՈՂՋՈՒՅՆ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԺՈՒՍՏԻՆԻԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՌՈՒՄԵՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՎՈ

Այս պահուս, երբ ռումեն օրթոդոքս սուրբ եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը կտոնախմբեն Ձերդ Սրբության հովվապետության քսան տարիներու վաստակը, Մենք հրճվանքով կու գանք զՁեզ ողջունելու եղբայրական ջերմագին սիրով և խոր գնահատանքով դեպի Ձեր հոգևոր բարձր անձնավորությունը և դեպի Ձեր շինարար պատմական իրագործումները, որոնք կոչված են ոսկի տառերով արձանագրվելու և փոխանցվելու գալիք սերունդներուն:

Մեր օրերուն, շնորհիվ Ձերդ Սրբության իմաստուն ղեկավարության, ռումեն եկեղեցին հասած է բարձր հեղինակության մակարդակի մը նաև միջեկեղեցական հարաբերությանց մեջ, ճշմարիտ արտահայտիչը հանդիսանալով քրիստոնեական սիրո և միության ոգիին ու ժողովուրդներու եղբայրության և աշխարհի խաղաղության երկնառաք պատվիրաններուն:

Այս երջանիկ պահուն Մենք չենք կրնար չհիշել նաև Ձեր լիառատ բարի զգացումները, որով տոգորված եք դեպի հայ եկեղեցին և հայ ժողովուրդը, որոնք ավելի քան կես հազարամյակի խաղաղ ու բարօր կյանքի անցյալ մը ունենալով ռումեն հյուրընկալ հողին վրայ, յավետ կմնան երախտապարտ ռումեն ազնիվ և մարդասեր ազգին:

Արդ, Մեր սիրտը լեցուն լույս ուրախությամբ և եղբայրական անխառն սիրով դեպի Ձերդ Սրբությունը, կշնորհավորենք Ձեր գահակալության քսանամյակը և հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցվո Ձեզի կներկայացնենք ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշանը, աղոթելով, որ Տերը Ձեզի շնորհե կենաց ևս բազում տարիներ Ձեր պատրիարքական Աթոռին վրա, ի փառս ռումեն օրթոդոքս եկեղեցվո և ի մխիթարություն մեզ բոլորիս:

«Այսօր է զոր արար Տէր, եկայք ցնծասցուք եւ ուրախ եղիցուք ի սմա». Ամեն:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տվավ կոնդակս ի 6-ն հունիսի
1968 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԺԷ,
ի մայրավանս սրբո Էջմիածնի
ՀՄՐ, 635